Թէ սերտ բարեկամ ընկեր սիրելի
Ա՛յս օտար երկրում գտնելս յաջողի,
Էս լաւ ինձ ասեմ՝ սիրտս սփոփի,
Հազար բեր կրանացս՝ ահ զմին գոփ։
Թէ գայ մի կղունկ բերէ ինձ մի գիր,
Որ ինձ աւետէ ձայնիւ բերկրալիր,
«Թէ քո Հայրենիք՝ համայն սիրելիք
Ողջ են և առողջ կենօք երջանիկ»։
Կռունկն այն կոչեմ՝ հրեշտակ Հայրենեաց,
Մխիթար սրտիս՝ մտացս տխրաշղեաց,
Բեռն նժդեհութեանս փոքր ինչ թեթեւի,
Կարօտոյս բոցեր փոքր ինչ շիջանի։
Սահիր՝ ով լուսին՝ ուղիղ ճանապարհ
Դէպ ի ցանկալի Հայաստան աշխարհ,
Վաղ երեկոյեան երբ ինձ երևիս,
Դատարկ չդառնաս՝ բեր ինձ աւետիս

Ս. ԳՆՈՒՆԻ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ.

ՀԱՆԴԷՍ

ՏՕՆԻ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ.

ԵՒ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԳԱՐՁԻ

ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

Ամսոյս 26-ին Ս. Էջմիածնում փառաւոր հանդիսիւ տօնուեցաւ Ազգիս մեծագործ Հայրապետի անուանակոչութեան տօնը Գէորգեան ճեմարանի Եօթներորդ Տարեգարձի հետ միասին։ Առաւօտեան ժամերգութիւնից յետոյ Մաղթանքի ժամանակ թէ Միաբանութեան՝ թէ ճեմարանի սանունց եւ թէ Վաղարշապատի օրիորդաց դպրոցի ուսանողաց կողմից կարդացուեցան ուղերձներ՝ եւ ամենայն բազմութիւնը արժանացաւ Վեհ. Հայրապետի սուրբ օրհնութեանը։

Վեհափառ Հայրապետը Ս. Պատարագին եկեղեցի ելաւ չնայելով եղանակի խոնաւութեանը։ Ս. Պատարագից յետոյ՝ զոր մա-

տոյց Դեր. Անդրէաս Արքեպիսկոպոսը, միաբանական Ուխտը ձեմարանի սանունց հետ միասին զգեստաւորուած խաչիւ խաչվառաւ եւ եկեղեցական հանդիսիւ «Քաղամարդիկ» շարականը երգելով գնացին ձեմարանը, որոց հետեւումէր տեղական եւ ուխտաւոր ժողովրդեան բազմութիւնը եւ ձեմարանի հիւսիսային սիւնադարդ դրան կամարակապի առաջ «Ով Սո-ւրբ Գէորգ» շարականը երգելուց զկնի թափօր կազմելով՝ ձեմարանի Վեհափառ Հիմնադրի ծնօղաց համար Հոգեհանգիստ կատարեցին։ Յետոյ ձեմարանի նախկին կառավարիչ Անդրէաս Արքեպիսկոպոսը ճառ խօսեցաւ, շնորհաւորելով ձեմարանի եօթներորդ տարեդարձը, հարեւանցի կերպով յայտարարեց նորա անցեալ եւ ներկայ ներքին դրութիւնը եւ իւր՝ ձեմարանի կառավարչական պաշտօնից հրաժեշտը, բարեմաղթելով Վեհափառ Հայրապետին երկար եւ առողջ կեանք։

Այս վառաւոր հանդէսը վերջացաւ ձեմարանի սանունց սրտառուչ երգերովն ու ճառերով եւ ապա բոլոր հանդիսականք հրաւիրեցան ձեմարան աշակերտաց աշխատասիրած ընտիր նկարները նկատելու։ Մայր Աթոռոյս հասարակաց սեղանատանը, ուր հրաւիրուած էին բազմաթիւ հիւրեր, կարգացուեցաւ ճառ եւ երգուեցան ազգային երգեր, նոյնպէս եւ ձեմարանում։ Երեկոյեան ճրագալոյց էր, եւ թէ տեղական եւ թէ ուխտաւոր ժողովրդականք մինչեւ ժամը 9 միսիթարուեցան ձեմարանի սանունց քաղցր երգեցողութեամբ։

Ահաւասիկ ձեմարանի 1880 — 81 ուսումնական տարուայ ներքին դրութեան մասին Սրբազան Կառավարչի հաղորդած տեղեկութիւնները։

«Ձեմարանի աշակերտաց անցեալ ուսումնական տարուայ տարեկան հարցաքննութիւնները՝ որքան կարելի էր յուսալ, բաւական յաջող էին, այնպէս որ նորանցից միայն երեքը մնացին Առաջին դասարանում՝ երեքը՝ Երկրորդ դասարանում՝ և երեքը՝ Երրորդ դասարանում. իսկ մնացեալ ամենքը փոխեցին իրանց դասարանները։

Յիշատակութեան արժանի է, որ բաց ի ձեմարանիս մէջ ուսանողաց այն ուսմունքներից, որոնք Արարատ ամսագրոյ ընթերցողաց յայտնի են, ուսեցան մանկավարժութիւն և փիլիսոփայութիւն առաջին և երկրորդ

լսարաններում, վերջինը բացուեցաւ ներկայ ուսումնական տարւոյ սկզբում։

Գովելի է աշակերտաց բարոյականութիւնը, որոնք գրեթէ առհասարակ որբ և աղքատ ծնողաց զաւակներ են, բնակիչք Ռուսաստանի, Տաճկաստանի և Պարսկաստանի, նոյնպէս նոցա ջանասիրութիւնը և ուշադրութիւնը։ Աշակերտաց առողջութեան պահպանութեանը համար լինում խնամք հմուտ բժշկի հոգատարութեամբ։

Անցեալ ուսումնական տարւոյ սկզբում գտնվում էին ճեմարանիս մէջ 132 աշակերտք, որոնցից մինը Երկրորդ դասարանից, երկուքը՝ Վեցերորդ և երկուքը՝ Առաջին Լսարանից արձակուեցան իրանց խնդրանաց համաձայն, արձակուեցան նոյնպէս երկուքը Երկրորդ և Չորրորդ դասարաններից զանազան պատճառներով, իսկ երեքը՝ տակաւին իրանց հայրենիքից չվերադարձան, որոնց տրուած էր ամարային արձակուրդ, ընդ ամենն 10 աշակերտք և մինը կնքեց իւր կեանքը։

Իսկ ներկայ ուսումնական տարւոյ սկզբում, ինչպէս ճեմարանի նորընտիր յարգելի Տեսուչը յայտնում, մինչև ցարդ աւելցան 50 նորամուտ աշակերտներ, որոնցից 45 ը Ռուսաստանի բնակիչ են և 5 ը Տաճկաստանի։ Սոցանից մնան հարցաքննութեամբ Առաջին դասարանը 2 աշակերտներ, Երկրորդը 13, Երրորդը 4, Չորրորդը 1, Վեցերորդը 1 և առաջին լսարանը 3, որով ճեմարանի ամեն աշակերտաց թիւը է այժմ 171, այսպէս դասաւորուած։ Առաջին դասարանի մէջ կան 31 աշակերտ, Երկրորդին մէջ 36, Երրորդին մէջ 24, Չորրորդին մէջ 22, Հինգերորդին մէջ 21, Վեցերորդին մէջ 19, առաջին լսարանին մէջ 11 և երկրորդ լսարանին մէջ 7։»

Ահա ճեմարանի սանուցց կողմանէ Մաղթանքի ժամանակ կարդացուած ճառը՝

ՈՒՂԵՐՁ։

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ։

Եթէ երախտագիտութիւն քաղցր է ի զգացմունս, և եթէ աղգք ի ցընծութիւն վարկանին ասնել զյիշատակ բարերարացն, որոց զոյզն ինչ նպաստամատոյց լիալ իցէ բարօրութեան ժողովրդեանն, քանի՞ արդեօք երջանիկ պարտիք համարել զանձինս մեք բարերարելոյս ի Վեհէդ, որ ունիմք այսօր զբաղդ կրկին առթիւ ուրախութեան ներկայանալ առաջի Վեհափառութեան Ձերոյ և զոյզն բանիւք յայտնել զոր զգամքս ի խորս երախտագէտ սրտից մերոց։

Վեհափառ Տէր։ Դուք որ ընտրեալ էք ի Տրիքարասան ամուց հետէ յաթոռս մեծի Հայրապետին Գրիգորի՝ ընաւին իսկ քաջ ներհուն գտանիք

Վեհ պարտաւորութեան Սրբազան կոչմանդ և պաշտաման՝ նա և պատմութեան ազգաց անցելոց՝ որ է ճշմարիտ ուսուցիչ մարդկային ազինա և իմաստուն առաջնորդ առ ի զգուշութիւն ընդդէմ ամենայն չարեաց և առաւել ևս առ ի գործել զարժանն և զփառաւորն։ Անկաւ Յաւիտենականն երբեմն կարծեցեալ տիեզերակալութիւնն արևմտեայց պետութիւնն Հռովմայ՝ զի անգոսնեալ զդիտութիւն զհետ եղև մոլար նախանձու աշխարհակալութեան և փոխանակ նախնի պարզութեան բարուց բնակչացն՝ թագաւորեաց ի նմա առ հասարակ ապականութիւն։

Կորեան Ասորեստանեայք զի ի նիւթական մեծութեան համարեցան զբատանել զերջանկութիւն ժողովրդեան։

Անհետ եղեն Փիւնիկեցիք՝ զի ի վաճառս և ի գանձս եղին զյոյս իւրեանց. և մեք իսկ Հայքս ի գուն անդնդոց անդարձ կորստեան հասեալ էաք՝ եթէ ձեռք Անեղին ոչ հասանէին ի թիկունս՝ որպէս տեսանեմք յակն արկեալ զպատմութիւն Թորգոմեան տանս սկսեալ յերկոտասաներորդ դարէ և այսր մինչև ի մեզ՝ որ է նկարագիր միայն բարոյական թշուառութեանց և նիւթական աղետից։ Եւ պատճառ չարեացս զի՞նչ. ոչ այնչափ բռնութիւն ժամանակին և գերողեն հասեալ ի վերայ՝ այլ առաւել ևս պակասութիւնն ուսման՝ որ հասանէր մինչև ի տգիտութիւն նոյն իսկ պատմութեանն անցելոյ ազգիս մերոյ։ Գոյութիւն ազգի և զօրութիւն ոչ եթէ ի մթերաց անտի զինուց և գանձուցն կախեալ կան՝ թէպէտ այնու չափեսցին՝ այլ գոյութիւն և զօրութիւն ազգի կախեալ կան ի դաստիարակութենէ իւրաքանչիւր անհատիցն ևս և ի հաստատութենէ ճշմարիտ բարոյականութեանն ի նոսա և դիտութեան։

Դիտութիւն՝ ճշմարտութիւն է՝ և ճշմարտութիւն յաւիտեան կայ և պահպանէ զորս զկնի նորա գնան։ Որպէս մարմին ոչ կարէ լինել առանց հոգւոյ՝ այսպէս և ազգք անգէտք և անկիրթք կորիցեն. այս է ուսումն պատմութեան՝ հետևանք բազմադարեան փորձառութեան՝ զոր և Ս. գիրք հաստատեն. այս են օրէնք Աստուածայինք։

Վեհափառ Տէր՝ Դուք որ քաջ գիտէք զայսոսիկ ճշմարտութիւնս՝ քանի՞ արդեօք իմաստնագոյնս գործեցէք ի սկզբնաւորութենէ իսկ ամենակալութեան Ձերոյ՝ յորդորելով զհոգևոր մանկունս Ձեր՝ զորդիս Հայոց՝ զհետ լինել զդիտութեան և զբարոյական կրթութեան յուղիղ շաւիղս՝ և հիմնելով զՏաճարն զայն մեծապանծ՝ լինել աղբիւր և շտեմարան ազգի ազգի մակացութեանց և վայելուչ կրթութեան բուժել զպաստուք Հայ մանկաւոյս և որպէս ջանք և աշխատութիւնք քաջ պարտիզպանին բազմօք արդիւնաւորին՝ այսպէս և տքնութիւնք և ճգնութիւնք Հօրդ հասարակաց փութով հարիւրապատիկս պտղաբերեսցեն գործակցութեամբ քաջավարժ ուսուչացս՝ և եթէ ներեսցի ինձ՝ համարձակեցայց ասել՝ ո՛ Հայր՝ զի հասեալ իսկ է արդէն գարուն դեռաբողբոջ պարտեզիդ և տունկք բանաւոր փթթին տակաւ ի ծաղիկս՝ խոստացեալ պտուղս ըստ ժամուն՝ քաղցրացուցանել զբիմս Ձեր թերևս ըստ յուսոյն տածելոյ։

Եւ արդ եղբարք սիրելիք, զի՞նչ ուրախութիւն մեծ վասն մեր, ասա-ւել քան զլուսալ զփափագ որդեսէր Հօրս մերոյ որ զցայգ և զցերեկ աքնի վասն մեր և յաղօթս իւր հանապազ թանայ զպատուանդան բարձրելոյն արիանալ մեզ յընթացս ուսման մերոյ. ուրեմն և մեք մաղթելով առ Աստուած մանկական բերանովք մերովք, խնդրեսցուք զի երկարեսցէ զթել կենաց Վեհափառ Հօրս մերոյ յամայր ամս, բարեխօսութեամբ Սրբոյն Գէորգայ Զօրավարին, և հաստատուն պահեսցէ ի բազում ամս զՀիմնարս Նարակատոյց շինուածոյդ Ճեմարանի, առ ի լինել արձան անմահ սքանչագործութեանց Ազգասէր Հայրապետիս և լնուլ զկարիս բազմակարօտ Ազգիս Հայոց։

Ի Դէմոց հոմօրէն աշակ. Գ. ՃԷՄ.

Աշակ. Ա. Լաբրանի

ՅԱԿՈԲ ՊԵՔԵԱՐԵԱՆՑ ԱՑՆԹԱՊՅԻ

***

Ազգիս Վեհափ. Հայրապետը՝ ի նշան իւր քաղցր համակրութեան դէպի Տփխիսում կայացած Հնագիտական Ժողովոյ հանրապահ ձեռնարկութիւնը, բարեհաճեցաւ իւր կողմանէ յատուկ գրութեամբ ներկայացուցիչ ուղարկել բարեշնորհ Խորէն վարդապետ Ստեփանէն, յիշեալ Ժողովոյ նիստերին մասնակցելոյ համար ուշադրութեան եւ հետաքննութեան արժանի Հայկական հնագոյն նշանագրերը եւ ծածկագրաձեւ սղագրութիւնքը պարունակող մի ձեռագիր մատեան եւս ի միասին զրկելով։

Խմբագրութեանս թղթակիցների գրութիւններից տեղեկանում ենք, որ Հնագիտական Ժողովը վայելուչ յարգանքով եւ խնդագին գոհունակութեամբ ընդունել է Ս. Հայրապետի ներկայացուցիչ բարեշնորհ Խորէն վարդապետին։

***

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ Մեծ. բժիշկ Լեւոն Տիգրանեանի Երեւանում հրատարակել սկսած «Առողջապահական Ընթերցարան» ամսատետրի ա. համարը, որը ուշադրութեան արժանի գովելի ուղղութիւն եւ բովանդակութիւն ունի։ Պարոնի հրատարակութիւնը թէ նպատակայարմար ու օգտակար է եւ թէ քաջալերութեան արժանի, ուստի եւ կցանկամք նորա յարատեւ շարունակութեանը։

Արդարեւ Հայ ազգը դարուս գիտութեան շատ ճիւղերին ծանօթանալու եւ նոցա մէջ հաւասար զարգանալու շատ ու շատ զգալի կարիք ունի, բայց այն առողջապահական պայմաններն